



10 (585)

30.04.2020

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՐԱՐԱՐ

Лусарар •

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

• Lusarar

## Ո՞՞ ԹԵ Ո՞՞ՔԱՆԷ, ԱՅՆ ԿՈ՞՞ՇԵՆԷ

Հիշում ենք ու պահանջում...

Հիշելն, այո, խիստ կարևոր է, որովհետև այնպիսի մի փոքր ազգի համար, որպիսին հայն է, մեկուկես միլիոն զավակների ոչնչացումն ու հայրենագրվումը սոսկ այլատյացության ցնցող փաստ չէ: Այն ազգի գոյատևման հիմնապայմանն է, առհասարակ, պատմության թատերաբեմից հեռանալու իրական վտանգ:

Ի՞նչ կլինե՞ր, եթե Արևելյան Հայաստանի պատմական տարածքում, այս փոքրիկ հողակտորի վրա, չկերտեհինք մեր պետականությունը, չհաստատեհինք մեր ազգային ինքնությունը: Մենք էլ երևի մոռացության կմատնվեհինք այնպես, ինչպես հիմա Բարեւոյնը չի հիշվում: Բայց չէ՞ որ երբևէ այդ հզոր երկրի ախոյանն ենք եղել, կարողացել ենք արժանապատվորեն դիմագրավել բոլոր փորձություններին: Ո՞րն է եղել մշտագոյության մեր ֆենոմենը, ի՞նչ գործընթացն էր կարողացել դիմագրավել թվացյալ ուժեղներին:

Ճակատագիրը մեզ լավ հարևաններ «չի շնորհել», ստիպված ենք եղել հաշտ չլինել մեր օջախներին աչք դրած նեոգոյականների հետ: Եղել են նաև տևական ժամանակահատվածներ, երբ կորցրել ենք մեր պետականությունը, հայտնվել ենք նրանցից ոմանց մոտ խորապետության ներքո, կեղծվել ենք, հալածվել: Սևծովյան ու միջերկրածովյան տարածաշրջանների երկրներից շատերն, ի դեպ, նույնատիպ ճակատագիր են ունեցել՝ այդ ո՞նց եղավ, որ թուրքական յաթաղանի զոհն ազգովի մենք դարձանք միայն: Կարելի է, թերևս, հարցին տրամաբանական պատասխաններ գտնել՝ հղում անելով աշխարհաքաղաքական բարդ իրողություններին: Սակայն պատասխաններն ունենալով հանդերձ, առկա կմնա հիմնական հարցը՝ արդյո՞ք դատարարված չենք նույն ճակատագիրը կիսելու գալիք սերունդների հետ:

Պատմությունը հարկավոր է հիշել, անկասկած, և անպայման արժանի դասեր քաղել: Այնպիսի դասեր, որոնք կուսուցանեն ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ Իրամայականը: Ոչ թե պարզապես աշխարհին հորդորելու ճանաչել մեր հանդեպ իրականացված ոճրագործությունները, այլ ինքներս մեզ պահանջելու, որ տեր կանգնենք մեր ողբերգությանը, քանզի ամեն մի ողբերգական դրվագի տակ մարդկային մի կյանք կա, և ցավ կա այդ կյանքի մեջ: Մեկը չէ, հազարները չէ՝ մեկուկես միլիոն հայի տառապանք կա հավաքական այդ ողբերգության մեջ: Պիտի ինքներս մեզմից պահանջենք՝ վերջ տալ լավկանությանն ու թուլականությանը, ներքին պառակտումների ավանդական դարձած սովորույթին: Արդյո՞ք դա չէ մեր բոլոր պարտությունների մնալուն պատճառը:

Եթե համեմատելու լինենք 1914-1920 թվականներին Արևմտյան Հայաստանում կատարված ցեղասպանությունը 1988-1992 թվականներին Ադրբեջանում ու Արցախում տեղի ունեցած իրադարձությունների հետ, ապա կնկատենք դաժանության նույն բեմագիրը: Մասշտաբներն ու ծավալներն են տարբեր, ձեռագիրը նույնն է: Դժվար չէ ենթադրել, որ եթե ազգովի ոտքի չկանգնեհինք ու չմարտնչեհինք, ոչ միայն Արցախը, Հայաստանը ևս կարժանանար արևմտահայերի դառը ճակատագրին: Բայց դա տեղի չունեցավ, քանզի միաբան էինք ու սեփական ուժերին ապավինած: Ահա սա՛ է Ցեղասպանության գլխավոր դասը, որը արդիական է հիմա և այդպիսին կլինի նաև վաղը:

Հիշենք ու պահանջենք՝ լինել անկտրում ու միասնական, կարողանալ ժամանակի միջով տեսնել հայոց ապագան՝ միացյալ և ամբողջական Հայաստանի հստակ կերպարով:

Չողբանք այլևս, այլ կոչենք ապրողաց...

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ԶԱ՛ՅՆ ՏՈՒՐ, Ո՛՛Վ ԵՈՒԿԱԿ...

Խոսք՝ Րաֆֆու  
Երաժշտությունը՝ Կոմիտասի

Զայն տուր, ով ծովակ, ինչո՞ւ լռում ես. Ողբակից լինել չկամի՞ս դժբախտիս: Շարժեցե՛ք, զեփյուռք, ալիքը վետ-վետ. Խառնեք արտասուքս այս ջրերիս հետ:

Հայաստանի մեջ անցքերին վկա, Սկզբից մինչ այժմ, խնդրեմ, ինձ ասա՛: Մի՞թե միշտ այսպես կը մնա Հայաստան՝ Փշալից անապատ, երբեմն բուրաստան:

Մի՞թե միշտ այդպես ազգը խղճալի, Կը լինի ծառա օտար իշխանի, Մի՞թե Աստուծո աթոռի մոտին Անարժան է հայն եւ հայի որդին:

Արդյոք գալո՞ւ է մի օր, ժամանակ, Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ, Եվ ամեն կողմից պանդուխտ հայազգիք Դիմել դեպ իրենց սիրուն հայրենիք:

Դժվար այդ. միայն, տեսուչը վերին, Կենդանացրու՛ հայության հոգին, Ծագիր նոցա դու քո լոյս գիտության, Որով իբր էակ նոքա բանական, Կը ճանչեն մարդուս կյանքի խորհուրդը, Կը լինին գործով սիրոջ փառաբան:



\*\*\*

Հանկարծ ծովակի երեսին մի լույս. Ջրից դուրս եկավ մազելի մի կույս, Մի ձեռնում ուներ նա վառած լապտեր, Իսկ մյուսում՝ քննար փայլուն փղղոսկեր: Արդյոք հուրի՞ էր, հրեշտակ աննշան,- Ո՞չ, հայ մուգաների տիպ համանման: - Հայոց ճակատագիրը կարո՞ւ, ով մուգա, Ներկա և գալոց գուշակիր, ասա՛: (Ասաց երկնային այն ոգի քաղցրիկ):

- Ավետիք տամ քե՛զ, մո՛ղեհ պատանի. Սրբի՛ր աչքերից արտասուքդ աղի: Կըզան մոր օրեր, օրեր երջանիկ,- Երբ Տիրոջ կամքը, ազատ ու արդար Կը թագավորե՛ր - կրկին ոսկեդար:

- Հայոց մուգաքը կգարթուն կրկին. Հայոց պառնասը կը ծաղկի վերստին, Եվ Ապոլոնյան կառքը լուսարար, Կըբողորե Հայոց թուխ երկնակամար:

- Մենք ևս քո պես, - երբ խորին գիշեր Պատեց Հայաստան, - սգավոր օրեր Շատ ենք անցուցել. այժմ սիրելի, Մենք ևս Հաշտության ստացանք ձիթենի: Սիրեցե՛ք քնարի լարերը ժանգոտ.

Ելե՛ք Հայաստան երգով եռանդոտ, Չարթեցրեք Հայոց աշխոյժ մեռած, Լցվեցավ կամքը, հասավ ժամանակ, Օրը կըբացվի, - ահա՛ Արուսյակ Ձեզ հայտնի նշան, ասում է Աստված: Կրկին մթնացավ: Չբացավ պատկերը: Երկար ժամանակ ոյութական ձայնը Լըսվում էր խառն ալիքների հետ, Օդին տիրել էր բուրունն հոտավետ:

Ախորժելի՛ լուր, ավետիք քաղցրիկ, Որպեսզի՛ հըրճվանք. մուգայդ գեղեցիկ, Ասա մեզ, մեկնիր, արդյոք հնարի՞ց Մի մեռած մարմնի գարթնող վերստին...

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԱՎԱՐՏԻ ԵՎ ԲՈՒՇԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանը ապրիլի 27-ին ֆեյսբուքյան ուղիղ եթերում անդրադարձել է կորոնավիրուսի պայմաններում ուսումնական տարվա ավարտի և բուհերի ընդունելության գործընթացին: Հաշվի առնելով, որ Արցախում չենք բացառություններով առաջնորդվելու են նույն կարգով, մերկայացնենք նախարարի տեղեկատվությունը:

### Դպրոցական քննությունները չեն անցկացվի

Ա. Հարությունյանը նշել է, որ ուսումնական տարին հեռավարով ենք ավարտելու, առկա լսարանային դասեր չեն լինելու, եւ մայիսին եւս հեռավար կրթությունը շարունակվելու է:

«Այս ընթացքում հաշվառում ենք, թե ինչ ծավալ է փակվել եւ նախատեսում ենք, որ հաջորդ ուսումնական տարում՝ սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսներին կունենանք շաբաթ օրերին պահուստային օրեր: Նաեւ քննարկում ենք ուսումնական տարին մեկ շաբաթ շուտ սկսել, բայց էլի մայիսի ամփոփումից է կախված», - ասաց նա:

Նախարարն անդրադարձավ դպրոցներում փոխադրական քննություններին. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական մի աստիճանից մյուսը տեղափոխվելու քննություններ չեն իրականացվելու 4-րդ եւ 9-րդ դասարանների ավարտին: Բոլոր առարկաների տարբեր շրջան գնահատականները կամփոփվեն առաջին կիսամյակի ամփոփիչ և երկրորդ կիսամյակի էլեկտրոնային գնահատականների հիման վրա:

Փոխադրական քննություններ չեն իրականացվում նաեւ ավագ դպրոցի 10-րդ եւ 11-րդ դասարաններում, ամփոփումը տեղի է

ունենում նույն ձևով»:

Նախարարի խոսքով՝ դպրոցներում չեն իրականացվի նաեւ ավարտական քննություններ. «Դպրոցներում ավարտական՝ 12-րդ դասարանի քննություններ չեն իրականացվում, ամփոփումը տեղի է ունենում նույն ձևով, ինչ 4-րդ եւ 9-րդ դասարանների դեպքում: Հաշվի առնելով, որ 12-րդ դասարանի որոշ աշակերտներ ավարտական քննությունները հանձնել են անցյալ տարեվերջին, նրանց ընտրելու հնարավորություն է տրվում. պահպանել քննական արդյունքը կամ ընտրել տարեվերջի գնահատականը որպես ատեստատում քննական գնահատական»,- մանրամասնեց Արայիկ Հարությունյանը:

Ամփոփումը կկատարվի, ու ատեստատները կհանձնվեն մինչև մայիսի 25-ը:

Ինչ վերաբերում է Վերջին զանգի արարողությանը, Ա. Հարությունյանը նշեց, որ համավարակի ավարտից հետո միայն կորոշեն մեկ օր, և այն կանցկացվի:

Ըստ նախարարի՝ քննությունների ժամանակացույցը պայմանավորված է զորավորչով. «Ավարտականների դեպքում մենք ունենք շատ կարելու անվտանգային խնդիր՝ զորակոչի խնդիրը. մենք այնպես ենք անում, որ զորակոչին չխոչընդոտենք եւ խնդիրներ չստեղծենք»:

«Քոլեջների եւ ուսումնարանների ավարտական դիպլոմային պաշտպանություն եւ քննություններ չեն իրականացվում, ամփոփումը կատարվում է այնպես, ինչպես դպրոցական ավարտականների դեպքում: Եթե սովորողը գնահատական չունի 2-րդ կիսամյակում, տարեկանը նշանակվում է ուսումնական տարվա առաջին կիսամյակի արդյունքով: Ամփոփումը կատարվում, եւ դիպլոմները տրվում են միջեւ հունիսի 5-ը»:

### Ընդունելության համար դիմորդները կհանձնեն մեկ քննություն

Անդրադառնալով բուհերում ընդունելության քննություններին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարն ասաց. «Հարցը շատ ենք քննարկել և ընտրել ենք օպտիմալ տարբերակը: Ըստ ընթացակարգի, միասնական քննությունների համար դիմորդները նախնական հայտերը լրացրել են մինչև մարտի 15-ը, բայց քանի որ ընթացակարգի փոփոխություն է տեղի ունենում, անհրաժեշտ է հայտերի փոփոխության և ճշգրտման ժամանակ տալ թե՛ արդեն հայտագրվածներին, թե՛ նախորդ տարիների շրջանավարտներին ու այն դիմորդներին, ովքեր նպատակադրվել են դիմել այլ բուհեր, որոնց քննություններն անորոշ ժամանակով հետաձգվել են: Ընդ որում, առաջարկվում է միավորել քննությունների հայտագրման գործընթացը բուհեր դիմելու-հայտեր լրացնելու գործընթացի հետ»:

Նախարարը տեղեկացրեց, որ մայիսի 25-ից դիմորդներին հնարավորություն կտրվի հայտագրվելու մինչև հունիսի 15-ը, միևնույն ժամանակ դիմորդները հնարավորություն կունենան ընտրելու թե՛ քննական առարկան, թե՛ բուհն ու մասնագիտությունը: Մինչև մարտի 15-ը մի քանի քննության համար հայտագրված դիմորդներին կվերադարձվեն քննությունների համար վճարված գումարները փոխանցման միջոցով:

«Քննությունները կհանձնեն հուլիսի սկզբին՝ առաջին տասնօրյակի ընթացքում: Այս հետաձգումն ինչ-որ չափով արել ենք, որպեսզի այն խնդիրները, որոնք եղել են արտակարգ դրության ժամանակ, կարողանան վերականգնել կամ ամրացնել իրենց գիտելիքները: Իսկ հայտերը կընդունվեն էլեկտրոնային եղանակով», - շեշտեց Ա. Հարությունյանը:

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՅՈՒՄ

ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ



Աշխարհի առջև նոր մարտահրավեր է ծառայել, որը ցնցել է Երկիր մոլորակի բնակիչների կյանքի բնական ընթացքը: Ողջ աշխարհին համալսած նոր կորոնավիրուսի համաճարակը կենտրոնացրել է բոլոր ուժերին, եւ մարդիկ համախմբված պայքարում են վարակի տարածման դեմ: Հանրապետությունում բնակչության անվտանգությունն ապահովելու համար դադարեցվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունը: Եվ ելնելով անհրաժեշտությունից՝ ուսումնական գործընթացը ժամանակի հրամայականով սկսվել է նոր տարբերակով՝ հեռավար ուսուցմամբ: Թե ինչպես է կազմակերպվում հեռավար ուսուցումը Ասկերանի շրջանում, և ինչ միջոցներ են ձեռնարկվում դրանց արդյունավետությունն ապահովելու համար, իմացանք շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն ՄԱՅԻԼՅԱՆԻՑ:

- Պարոն Մայիլյան, ամբողջ աշխարհը համակած համաճարակը՝ COVID-19-ը, կարճաժամար է արել աշխարհի բնակչության բնականոն կյանքը: Եվ շուրջ մեկ ամիս է, ինչ շրջանի ուսումնական հաստատություններում և դադարեցվել է դասապրոցները: Ինչպես է կազմակերպվում աշակերտների հեռավար ուսուցումը:

- Իրոք որ աշխարհին համակած նոր կորոնավիրուսի համաճարակը ստիպել է կենտրոնացնել բոլոր ուժերին և մարդկանց համախմբել վարակի դեմ արդյունավետ պայքար տանելու խնդրում: Ուստի, ելնելով անհրաժեշտությունից, ժամանակի թելադրանքով շրջանի ուսումնական հաստատություններում անցել ենք հեռավար ուսուցման: Սերտ է մեր ամենօրյա կապը շրջանի դպրոցների տնօրենների հետ, և արվում է հնարավոր ամեն ինչ, որպեսզի ուսուցման այս եղանակով գոնե կարողանանք

ավարտին հասցնել ուսումնական տարին:

- Արդյո՞ք բոլոր աշակերտներն ունեն համացանցից օգտվելու հնարավորություն:

- Այ՛ն ԿԳՍ նախարարության, վարչակազմի ղեկավարի օժանդակությամբ և հանձնարարականներով, համագործակցելով դպրոցների տնօրենների հետ, աշխատում ենք հնարավորինս արդյունավետ իրականացնել հեռավար ուսուցման կազմակերպումը: Ուսուցման այս եղանակը նաև կանգնեցրել է մեզ մեկ այլ խնդրի առաջ: Գաղտնիք չէ, որ ոչ բոլոր աշակերտներն են ապահովված համակարգչով կամ բջջային հեռախոսով: Շրջանի 2459 աշակերտներից 195-ը զրկված է տեխնիկական այդ միջոցներից: Այս բացը լրացնելու և հեռավար ուսուցմանը խթանելու նպատակով բարեգործական տարբեր ծրագրեր են իրականացվում: Օրերս Հարավի միջնակարգ դպրոցին ՀՀ նախագահ

Արմեն Սարգսյանի որդիներ Հայկի և Վարդանի կողմից բարեգործական հիմունքներով 4 համակարգիչ և 8 պլանշետ է հատկացվել, որոնք կտրամադրվեն դպրոցի տեխնիկական միջոցներ չունեցող աշակերտներին, ինչի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում բարերարներին:

- Կան ընտանիքներ, որոնցում դպրոցահասակ մի քանի երեխա կա: Ինչպես է լուծվում հարցը:

- Ելնելով անհրաժեշտությունից՝ ուսուցիչները մշակում և իրականացնում են արդյունավետ տարբերակներ՝ ցուցաբերելով անհատական մոտեցում յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ: Այն ընտանիքներում, որտեղ մի քանի դպրոցահասակ երեխա կա, հեռավար ուսուցումն իրականացվում է տարբեր ժամերի:

- Արդյո՞ք բոլոր առարկաներն էլ հնարավոր հեռավար ուսուցմամբ մատուցել աշակերտներին:

- Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր օրենքներն է թելադրում, և մենք պարտավոր ենք ենթարկվել: Եթե այսօր պայմաններն այսպիսին են, ուրեմն մեզանից յուրաքանչյուրը պետք է մեծ պատասխանատվություն ցուցաբերի և իր աշխատանքը բարեխղճորեն կատարի: Հեռավար ուսուցմամբ, իհարկե, չենք կարող հասնել այն արդյունքին, ինչպես որ առկա ուսուցմամբ, սակայն մեր ուսուցիչները համաճարակի այս պայմաններում ջանում են առավելագույնն անել՝ կիրառելով տարբեր միջոցներ և հնարքներ: Իսկ ֆիզկուլտուրա և ՆՁՊ առարկաներից մշակվել են համալիր ծրագրեր շաբաթվա կտրվածքով և տրվել աշակերտ-

ներին՝ ինքնուրույն պարապելու համար:

- Գիտե՞մք, որ շրջանի հանրակրթական դպրոցներում բավականին հազեցած էր առաջին կիսամյակը: Իսկ օլիմպիադայի արդյունքներով շրջանը կրկին առաջատար է:

- Նախորդ երկու ուսումնական տարիներին առարկայական օլիմպիադաներին Ասկերանի շրջանը շատ ակտիվ մասնակցություն է ունեցել հանրապետական և եզրափակիչ փուլերին՝ զբաղեցնելով առաջնակարգ տեղեր: Այս ուսումնական առաջին կեսում ևս մասնակցությունը խստաուսմանից էր. հանրապետական փուլում ունեցել ենք ավելի մեծ քանակով աշակերտներ՝ 70՝ նախորդ տարվա 55-ի դիմաց, բայց կորոնավիրուսի համաճարակն իր «ուղղումները» մտցրեց մեր սպասելիքներում:

- Ինչ եք կարծում, ե՞րբ հնարավոր կլինի կրկին վերադառնալ կրթական համակարգի նորմալ ընթացքին:

- Հույս ունեն, որ կատարելով արտակարգ իրավիճակով սահմանված նորմատիվային դրույթները, հնարավորինս շուտ կվերադառնանք բնականոն աշխատանքի:

- Չե՞ր մաղթանքը պանդեմիայի այս պայմաններում և ընդհանրապես:

- Առաջին հերթին պետք է ենթարկվել արտակարգ դրության պայմաններին և լրջորեն վերաբերվել այս ամենին: Մաղթում ենք մեր ժողովրդին առողջություն, հույս ու հավատ ապագայի հանդեպ:

Հարցազրույցը՝ Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

ՈՒՍՈՒՅՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻ ԵՎ ԲՈՒՇԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

1 Ըստ նրա՝ ապրիլի 30-ից սկսած՝ դիմորդները լիարժեք երկու ամիս կունենան քննություններին պատրաստվելու համար:

Ինչ վերաբերում է բանավոր քննություններին, դրանք չեն անցկացվի, սպորտի և արվեստի բուհերի մասնագիտական քննությունների դեպքում էլ մեկ միասնական քննություն կանցկացվի:

Բուհերում ավարտական քննությունների ձևն ընտրում են բուհերն իրենց ինքնավարության սահմաններում՝ պահպանելով համավարակի կանոնները:

«Մագիստրատուրա ընդունվելու համար ժամկետներ էին սահմանված հուլիսի 5-20-ը, առաջարկել ենք գործընթացը սկսել նախատեսածից մեկ շաբաթ ուշ՝ հուլիսի 16-30-ը: Ասպիրանտուրա ընդունվելու գործընթացի մասով առաջարկում ենք կասեցնել մրցութային չհանդիսացող օտար լեզու, ինֆորմատիկա և տեղեկատվական հաղորդակցական հիմունքներից ստացած համապատասխան միավորը հավաստող վկայականի կամ տեղեկանքի ներկայացման պահանջը: Առաջարկում ենք գործընթացն իրականացնել հուլիսի 16-30-ը:

Քոլեջներում և ուսումնարաններում ընդունվելուց կատարվելու է օգոստոսին՝ հիմնականում ատեստատների գնահատականներով, բացի արվեստի և առողջապահական հաստատություններից, որոնցում իրականացվում է մեկական քննություն նույն սկզբունքներով, ինչ բուհերի ընդունվելույան քննության ժամանակ: Հայտերի ընդունումը նույնպես իրականացվելու է էլեկտրոնային եղանակով»,- եզրափակեց Արայիկ Հարությունյանը:

Արցախում հնարավոր է, որ կատարվեն մասնակի փոփոխություններ: Այդ մասին կտեղեկացնենք:

ԵՐԲ ՀԻՄՔՈՒՄ ՊԱՏԱՄԱՆԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ Է

2020 թվականի նոր տեսակի կորոնավիրուսի տարածումը շարունակում է իր հետքը թողնել աշխարհի տարբեր երկրների բոլոր ճյուղերի վրա. արդյունաբերություն, տնտեսություն, քաղաքաշինություն, մշակույթ, կրթություն և այլն:

Բոլոր ժամանակներում էլ կրթությունը հանդիսացել է հիմնարար օղակ մնացած բոլոր ճյուղերի համար: Եվ ցանկացած ֆորսմաժորային իրավիճակում գտնվում է մի տարբերակ, որի միջոցով կազմակերպվում է դասապրոցները, և այն չի տապալվում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զերգարգացած ժամանակաշրջանում հեռավար ուսուցումը պարտադիր պայման է: Այսօր աշխարհում, ինչպես նաև մեր երկրում կրթական օջախներն իրականացնում են առցանց ուսուցում՝ օգտագործելով սոցիալական տարբեր ծրագրեր ու հարթակներ՝ ապահովելով կրթության շարունակականությունը: Հեռավար ուսուցումն արդյունավետ միջոց է և չի թողնում երեխաներին ետ մնալ ուսումից:

Ինչպես հավաստիացնում է Խնուշինակի միջնակարգ դպրոցի տնօրեն Հրայր Շաքարյանը, դպրոցի ողջ անձնակազմը, օգտագործելով հեռավար ուսուցման առավելագույն հնարավորությունները բացի ֆիզկուլտուրա առարկայից կատարում է առցանց ուսուցում:

«Մարտի 13-ից դադարեցված է ուսումնական գործընթացը: Մեր ուսուցիչները սկսել են աշակերտների հետ տարբեր ձևաչափերով պարապմունքներ անցկացնել ինչպես առցանց, այնպես էլ բակերում:

Խնուշինակում օնլայն դպրոցը սկսեց գործել մարտի 19-ից՝ շնորհիվ «ԵՍ» կրթական հիմնադրամի տնօրեն Աշոտ Ավանեսյանի: Նրա աշխատանքին մեծապես նպաստել են Լուիզա Ավանեսյանը և դպրոցի աշակերտ-



ներ Մոնթե Առուշանյանը, Նարե և Սյունե Շաքարյանները: Ուսուցումն իրականացվում է «Hangouts» և «Class room» ծրագրերի միջոցով: Մինչև մարտի 19-ը Ա. Ավանեսյանը երկու օր արել էր ուսուցիչների վերապատրաստում, բոլոր ուսուցիչների և աշակերտների հետախոսները:

թե՛ ուսուցիչները պատասխանատվության խոր զգացումով մասնակցում են դասերին: Եղած խնդիրները տեխնիկական մասով են, բոլոր ուսուցիչներն ու աշակերտները չէ, որ ունեն սմարտֆոններ կամ համակարգիչներ: Մյուսը իմտերներ կապի արագության և մատչելիության խնդիրն է: Ելնելով այն հանգամանքից, որ ընտանիքներում կան տարբեր դասարաններում սովորող աշակերտներ, ինչպես նաև ուսուցիչ ծնողներ, առավոտյան ժամը 9-ից մինչև երեկոյան 19-ը՝ ըստ ուսումնական պլանով հաստատված դասացուցակի, ընթանում է առցանց ուսուցումը: Գյուղական բնակավայրերում, բնակամբար, սա դժվարություններ է առաջացնում, բայց ստեղծված պայմաններում պետք է հաղթահարենք նաև այս փորձությունը: Բացի դրան թե՛ման մատուցելուց կատարում ենք դասալսումներ: Մեր օնլայն դպրոցում գրանցված է նաև կրթության բաժնի վարիչը և պարբերաբար հետևում է դասապրոցներին»,- պարզաբանում է դպրոցի տնօրենը և խորին երախտա-

Անուշ ԱՍՐԻԲԱԲՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ՄԱՅՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ ՏԱՐՐԱԿԱՆ ԳՊՐՈՋԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ



բառային մեթոդների առավելություններն ու դրանց կիրառման մեթոդական ինքնատիպությունը վաղ կրթության պայմաններում:

Ձ. Գյուլամիրյանը օրինաչափորեն խմբավորել է գրաճանաչության գործընթացի այն առանձնահատկությունները, որոնց իմացությամբ միայն կարելի է արդյունավետորեն և նպատակասլաց կերպով իրականացնել 6 տարեկանների կրթադաստիարակչական գործընթացը:

Կարևորելով դպրոց ընդունվող երեխաների ուսումնական գործունեության պատրաստականության մակարդակը՝ ձեռնարկում ներկայացված են այն հիմնական բնութագրիչները, որոնց բնավորության աստիճանով են պայմանավորված առաջին դասարանցու հիմնական հաջողությունները: Դրանց համախմբում հեղինակը մասնավորապես կարևորել է երեխայի՝

1. խառնվածքն ու բնավորության առանձնահատկությունները,
2. ճանաչողական հետաքրքրությունների շրջանակը,
3. միջամտային հարաբերությունները տարեկիցների հետ,
4. ուսումնական-աշխատանքային կարողությունները,
5. գեղագիտական հետաքրքրություններն ու կարողությունները,
6. հոգեկան գործընթացների զարգացման աստիճանը և այլն:

6 տարեկան երեխաների կարողալու, գրելու նախնական կարողությունների ձևավորման գործընթացի արդյունավետությունը Ձ. Գյուլամիրյանը պայմանավորում է երեխայի հնչյունային լսողության զարգացման մակարդակով և ներկայացնում է այդ կարողության զարգացման մեթոդական քայլաշարը:

Բժախնդիր մանրակրկիտությամբ է ձեռնարկում ներկայացված տառուսուցման և կարդալու տարրական կարողության ձևավորման մեթոդական շրջան, այդ ընթացքը խաղերով և փոխգործուն մեթոդներով կազմակերպելու անհրաժեշտության հիմնավորումն ու կազմակերպման հետաքրքրաշարժ ձևերը:

Քննարկվող դասագրքի առավելությունների մեջ մենք կարևորում ենք տեսության և գործնականի կապի ապահովման հեղինակի միտումը: Մեթոդիկայի բոլոր բաժիններում ներկայացված են ոչ միայն քննարկվող մեթոդների գիտական հիմնավորումները, այլև ուսուցման գործընթացի արդյունավետությունը բարձրացնող դիդակտիկ խաղերը, փոխգործուն մեթոդները գույզերով և խմբային, նախագծային և որոնողական գործունեություն պահանջող առաջադրանքներ:

Երկրորդ՝ «Ընթերցանության մեթոդիկա» բաժնում ներկայացվում են ընթերցանության խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում, բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերը և գրական տարբեր ժանրերի ուսումնասիրման գործընթացի առանձնահատկությունները:

Չեղիմակը մանրամասն ու հետաքրքիր հարցադրումներով է ընթերցողի ուշադրությանը ներկայացնում ԽԻԿ համակարգով կազմակերպվող մայրենիի դասի բաղադրիչները, դրանց արդյունավետությանը նպաստող փոխգործուն մեթոդական հնարների կիրառման մեթոդիկան:

Նա առաջարկում է նաև բնագիր ընթերցմանը նպաստող կարդալու տարրական կարողության ձևավորման միջոցները, հնարները: Մանրամասն ներկայացնում է կարդալու որակական հատկանիշների մեթոդական հնարները:

«Մայրենիի ուսուցման մեթոդիկա» բուհական ձեռնարկի կարևոր բաժին ենք համարում «Աշխատանք բնագրի շուրջ» խորագրով

ներկայացված ծավալուն ցուցումները, որոնք դիտարկվում են հինգ հիմնական ուղղություններով: Այս ուղղությունների շուրջ աշխատանքը հեղինակն առաջարկում է իրականացնել ոչ թե որպես մայրենիի դասի առանձին բաղադրիչ, այլ վերլուծահամադրական գործընթաց, որի խնդիրները լուծվում են ինչպես կարդալու և կարդացածը վերարտադրելու, բառային աշխատանքի երեք նպատակները լուծելիս, այլև մայրենիի դասի բոլոր փուլերում:

Այս խնդիրների լուծման համար ևս Ձ. Գյուլամիրյանն առաջարկել է ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ, դրանց կիրառման նպատակներն ու ձևերը համապատասխանացրել ԽԻԿ համակարգով կազմակերպվող մայրենիի դասի կառուցվածքին: Մայրենիի ուսուցման մեթոդիկայում ուշագրավ նորություն է գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման և յուրացման մեթոդական համակարգի ներկայացումը, որը ևս հեղինակն առաջարկում է կազմակերպել անձնակողմնորոշված կրթության համատեքստում: Մեթոդական այս մոտեցումների համակարգը տարրական դպրոցում դասավանդող բոլոր ուսուցիչներին կօգնի իրականացնելու չափորոշչահեն կրթություն, քանի որ աշակերտների կողմից գրական տարրական գիտելիքների իմացությունը չափորոշչային պահանջ է:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ընթերցած ստեղծագործության բովանդակության պատմելու ուսուցման մեթոդիկան: Պատմելու տեսակները, որոնք ներկայացված են եղել ավանդական մեթոդիկայում, Ձ. Գյուլամիրյանը առաջարկում է կազմակերպել փոխգործուն մեթոդական հնարների կիրառմամբ, որոնք մեծապես կնպաստեն հասկանալով պատմելու և կապակցված խոսքի զարգացմանը:

Կարևորում ենք մասնավորապես հարցաշար կազմելու, հարցաշարով պատմելու կարողությունների և մեթոդների զարգացման ներկայացումը, որը վաղ կրթության պայմաններում դժվարություն է ներկայացնում: Ի թիվս պատմելու ավանդական տեսակների՝ Ձ. Գյուլամիրյանն առաջարկել է նաև պատմել որպես մասնակից և որպես ակնաստես տեսակները, որոնք նպաստում են առաջին և երրորդ դեմքով պատմելու աշակերտների կարողության ձևավորմանը:

Մեծ ուշադրության արժանի է նաև ձեռնարկում քննարկվող «Բնագիր, կառուցվածք» թեման: Այդ թեմայի իմացությունը ուսուցչին մեծապես կօգնի բարձրացնել նաև «Խոսք և հաղորդակցություն» դասերի արդյունավետությունն ու հետաքրքրությունը: Չեղիմակը բավականին մանրամասնորեն ու ուշագրավ մեթոդներով է կարդացողի ուշադրությանը ներկայացնում հեքիաթի, պատմվածքի, ոտանավորի, առակի, առածների, ասացվածքների, շուտասելուկների և սուտասելուկների դասավանդման մեթոդական շրջան: Այս բաժնի բոլոր թեմաներն ավարտվում են դրանց գիտակցական յուրացմանը և մտապահմանը նպաստող ակտիվ մեթոդների ներկայացմամբ:

«Քերականության մեթոդիկա» բաժնում հեղինակն անդրադառնում է մայրենիի ծրագրով նախատեսված լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների յուրացմանը նպաստող մեթոդներին:

Լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրության գործընթացը Ձ. Գյուլամիրյանը ներկայացնում է երկու փուլով՝ լեզվական նախագիտելիքների ուսումնասիրում և լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրում:

Ընդ որում, կարևորվում է գործնականության սկզբունքի ապահովումը: Ձեռնարկում առաջադրված են վարժությունների տեսակ-

ներ և մեկնաբանված նրանց առանձնահատկությունները, համակարգվածությունն ու կիրառման գործընթացի ինքնատիպությունը:

Մեր մանկավարժական փորձը, ուսումնասիրությունները, ուսուցիչների հետ իրականացրած հարցազրույցները վկայում են, որ բոլոր աշակերտները սիրում են լեզվական վարժությունների կիրառումը: Բացի խմբավորելուց և համակարգելուց, հեղինակը գտնում է, որ լեզվական վարժությունները կատարելիս պետք է կարևորել այդ գործընթացում աշակերտների ինքնուրույնությունն ու ակտիվությունը, ստեղծագործական-որոնողական գործունեությունը:

Ինքնատիպ և արդիական մոտեցումներով են ներկայացված «խոսքի զարգացում» բաժնի տեսական դրույթներն ու դրանք գործնականում իրականացնելու մեթոդները: Այս բաժնի գիտական սկզբունքներն ու դրանցից բխող տեսական ու գործնական ցուցումներն, ըստ էության, ուշագրավ և կիրառելի են տարրական դպրոցի բոլոր դասարաններում: Մենք մասնավորապես արժևորում ենք սովորողների գրավոր խոսքի զարգացմանը միտված հեղինակի մեթոդական համակարգն ու վարժություններին ներկայացվող պահանջները: Չեղիմակն այն կարծիքին է, որ տարրական դպրոցում գրավորի բոլոր տեսակներն էլ պիտի ունենան ուսուցողական նպատակներ և իրականացվեն հենց այդ նպատակին հասնելու մեթոդական քայլաշարով:

Չեթաքրքիր ու բովանդակային գծակարգերով են ներկայացված խոսքի տեսակներն ըստ նրանց գործառնությունների և ըստ նշանակության: Տրված է պատմողական, նկարագրական, դատողական և գնահատող խոսքի ուսուցման մեթոդական շրջան, ինչը նպաստում է սովորողների՝ պատմելու, խոսք կառուցելու կարողությունների զարգացմանը:

Սովորաբար մեր տարածաշրջանում թույլ է սովորողների բանավոր խոսքը: Չեղիմակը տալիս է բանավոր խոսքին ներկայացվող պահանջները, կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման համապատասխան մեթոդները, խոսքի որակական հատկանիշները:

Բավականին մեծ հետաքրքրություն են ներկայացնում կրտսեր դպրոցականների բառապաշարի զարգացման մեթոդները: Մեր մանկավարժական փորձն ու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն ուսուցիչները, որոնք իրենց դասագործընթացում պարբերաբար կիրառում են այդ մեթոդները, զարգացած է սովորողների խոսքը:

Կրտսեր դպրոցականների խոսք կառուցելու կարողությունը հմտության վերածելու նպատակով Ձ. Գյուլամիրյանը ներկայացնում է խոսքային վարժությունների տարաբնույթ ու հետաքրքիր տեսակներ:

Մեծ արժևորում ունի նաև կրտսեր դպրոցականների ուղղագրական կարողությունների ձևավորման մեթոդիկան, որտեղ ներկայացվում են.

- ուղղագրական հմտությունների ձևավորման մեթոդները,
- ուղղագրական վարժությունների համակարգը:

Կարևորում ենք նշել, որ 2018 թվականին լույս տեսած «Մայրենիի ուսուցման մեթոդիկա» բուհական ձեռնարկով են աշխատում ոչ միայն Հայաստանի և Արցախի հանրապետությունների ապագա մանկավարժներն ու տարրական դասարանների ուսուցիչները, այլև Սփյուռքի հայկական դպրոցներում աշխատող մեր գործընկերները:

Աննա ԴԵՏՐՈՍՅԱՆ  
ԱՅ ԿՉՍՆ ԿԵՏՈՒՅ  
մ. գ. թ., դոցենտ





ՊԱՏԱՍՏԱՆԱՄԱՏՅԱՆ

ՃԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ Լ ՇԻՐԱԶԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆՔԵԱԿԱՆԸ» ՊՈՆՄՈՒՄ



Ոչ ոք չի կարող երգս կաշտել՝ Դեպի Մասիս է երգս աննահանջ...

Այս տողերը կարող են բնաբան լինել Շիրազի հայրենասիրական քնարերգության համար: Հայրենասիրության բոցավառ ջահը նա անմար պահեց հատկապես այն տարիներին, երբ այդ տրամադրությունների համար ստեղծվել էին աննպաստ պայմաններ, երբ քննադատական հայացքների մթնոլորտում բոլորը գերադասում էին լռել: Շիրազը չլռեց. նաև այստեղ է նրա սխարանը, նաև այստեղից սկիզբ առավ նրա ժողովրդականությունը:

Շիրազի հայրենասիրական քնարերգությունն ունի ընդգրկման բավականին լայն ոլորտ՝ ժողովրդի պատմական անցյալ, Հայաստանի վերածնունդ, սփյուռքահայության ճակատագիր, պատմական հայրենիքի ազատագրման հույս, հայոց լեզվի պահպանում՝ որպես ազգային գոյության նախադրյալ, ժամանակների կապ ու հիշողությունների շղթա:

Հովհաննես Շիրազը ստեղծագործական ողջ կյանքում իր բոլոր հույզերով ու զգացումներով ապրել է ժողովրդական տարերքի մեջ, եղել ժողովրդի անդամակցության ուղիղ ու նրա հոգու թարգմանը:

Ավետիք Իսահակյանի խոսքերով ասած՝ Շիրազը հայ ժողովրդի վշտի մառախուղից ծագած աստղ է, տիեզերքի բոլոր գույներով փայլատակող մի լուսապայծառ աստղ, որն իր կենսատու ճառագայթներով այնքան շռայլորեն ջերմացրեց ու հարստացրեց հարազատ ժողովրդի բանաստեղծական ոգին:

Շիրազի լուսեղեն պոեզիան մեղմ է, ինչպես Մանթաշից եկող հովերը և հուժկու, ինչպես Ալազյազի ամպրոպները:

Շիրազը ծնվեց իր ժողովրդի տառապանքներից ու հույսերից: Մարդկային իր կենսագրությանը նա «ծերացած որբերի» սերնդից էր, «անունով էր, մանկություն չտեսավ», որ իր պատանեկությունն ապրեց՝ «ծախելով ծովն արցունքների»:

Եվ գուցե այս ամենը, նրա այդ չափարած մանկությունն էր պատճառը, որ մինչև իր կյանքի վերջը մնաց մեծ երեխա՝ զարմացած ու միամիտ, երբեմն նաև՝ խռովկան ու նեղացկոտ և այս ամենով՝ համընդհանուր սիրելին, Հայաստան աշխարհ կոչվող մեծ տան սիրելի երեխան: Նա ճշգրիտ հասակակիցն էր Հայաստանի առաջին պատերազմի, որ անլուր աղետների մատնեց նրա հայրենի հողն ու ժողովրդին, և այս ամենը չէր կարող չհերժեցնել նրա գերզգայուն հոգու բոլոր բջիջների մեջ: Եվ այս ամենի սթափ գիտակցումով անհնար է չզարմանալ, թե իր ամենաառաջին երկերից սկսած որքան կյանք ու արև նա բերեց իր հետ, որքան քնքշանք ու բարություն իր անուրախ մանկությունից, նրա

վիրավոր հոգուն ինչպե՞ս ծլարծակեցին, շռայլ բերք տվեցին բարության սիրո ազնիվ սերմերը...

Անգամ սեփական տառապանքից իսկական տաղանդը միայն լույս ու բարություն է ծնում, օգնում է մարդկանց՝ սիրել ու հավատալ:

Հովհաննես Շիրազն իսկական բանաստեղծ է, ուրեմն, նա չէր կարող երջանիկ կամ դժբախտ լինել միայն իր անձնական բախտի վիճակներով:

Թեպետ կորցրի մի խեղճ մանկություն, Բայց հազար ոսկի մանկություն գտա:

Ժողովրդի պատմության ճակատագրական պահը բանաստեղծի ստեղծագործության մեջ բեկվում է 1915 թվականի Մեծ եղեռնի պատկերի մեջ: Եղեռնը նա իրավացիորեն համարում է «մեղքերի մեղքը»:

Վերհուշերի կծիկը վերակենդանացնում է մեծագույն եղեռնի պատմությունը՝ մի մեծ ժողովրդի մեծագույն ողբերգությունը, որը բանաստեղծը փորձում է գեղարվեստորեն մարմնավորել Հայ դանթեականը պոետական պատկերով:

Չարենցի «Դանթեական առասպել»-ից հետո, որն ազգային մղձավանջի ակամատեսի դանթեականն էր, ստեղծվում է Շիրազի «Հայոց դանթեականը» լայնաշունչ պոեմը, որն արդեն անլուր արհավիրքը վերապատմողի դանթեականն է:

Շիրազը նկարագրում է ժողովրդի անասելի ողբերգությունը, դարավոր ոսոխի գործած վայրագությունները, գաղթը, աքսորը, մահվան ճանապարհը:

Ուր պիտի Դանթեն յոթնասեր զղջա,

Որ յուր դժոխքի դժոխքն է իր դեմ:

Բանաստեղծը ստեղծեց համաճարակային մի գործ՝ պատկերելով 1915 թվականի Հայոց մեծ եղեռնի դանթեական սարսափները...

Անվանի գրականագետ Ս. Աղաբաբյանը տվել է պոեմի բնութագիրը:

«Խղճի ու բանականության, մարդկայնության ու ասպետականության կանոններով հյուսված մեղադրական թուղթ, որը պետք է գրվեր, չէր կարող չգրվել: Իսկ եթե գրվել էր՝ չէր կարող նաև չտպագրվել: Եվ դա տեղի ունեցավ եղեռնի 75-ամյակի և հանճարեղ բանաստեղծի ծննդյան նույնպես 75-ամյակի առիթով»:

Պոեմը հայոց հանճարի նորագույն թռիչքն է, հայ ժողովրդի անհաղթահարելի վշտի ու անքակտելի հզորության ապացույցը:

Հիշենք Նարեկացու «Մատյան ողբերգությունը» և Պարույր Սևակի «Անլուրի գանգակատունը»: Սրանք ազգ ու հայրենիք պահող եզակի երկեր են՝ յուրաքանչյուրն իր ինքնատիպ առանձնահատկությամբ, արվեստով ու վիպական խորք ու ծավալով, իր համամարդկային արդարությամբ...

Շիրազի «Հայոց դանթեականը» գալիս է մեկ անգամ ևս ապացուցելու, որ միլիոնամյա հայ ժողովուրդը չէր կարող ոչնչանալ ինչ-որ թալեաթ-էմվեր-Ջեմալ թուրքական եռյակի մատի շարժումով...

Գալիս է ապացուցելու, որ հայ ժողովուրդը երկիր մոլորակը սկզբնավորող և նրա կյանքն ու էությունը պահպանող ու հարատևություն տանող ժողովուրդներից է:

Ժողովուրդ, որ լինելով ստեղծագործ ու շինարար, իր ուսերին է կրել մարդկության ցավն ու տառապանքը... Դրանով հույս ու հավատ է ներշնչելու ողջ մարդկությանը, թե

կարելի է ու հնարավոր է ստեղծել տիեզերական-բանական հասարակություն այս մոլորակի վրա:

Պոեմի յուրաքանչյուր ընթերցող իրեն զգում է ազատագրված Մարդ:

...Բայց Մարդը ե՞րբ է գերվել...

... Գալիս է ապացուցելու, որ Մարդ լինելը սարսափելի դժվար է...

Հովհ. Շիրազը գրում է «Հայոց դանթեականի» առաջին տարբերակը՝ հայոց չարաղետ ճակատագրի միջոցով հնչեցնելու պատերազմների՝ մարդկության և կյանքի մեծագույն թշնամու, դատապարտման թեման:

«Հայոց դանթեականը» յուրօրինակ տեսլապոեմ է. Մեծն Դանթեին, ապա հայոց պատմության սրբացած որդիներին՝ Գրիգոր Նարեկացուն, Կոմիտասին, Անդրանիկ Ջորափարին, Հովհաննես Այվազովսկուն և այլոց, «վիզը Հովհաննես» վերամկրտված բանաստեղծն առաջնորդում է պատմական Հայաստանի տարածքով մեկ, ուր տեղի ունեցավ մարդկության մեջ առաջին ցեղասպանության ոճիրը:

Մեկը մյուսի ետևից վեր են հանում եղեռնապատումի տեսլապատկերները՝ սարսա-



փի, զարհուրանքի, չարչարանքի պատկերներ, որոնց առաջ նսեմանում են անգամ դանթեական դժոխքի գույները, իսկ դրանց ստեղծողը՝ Ալիգերի Դանթեն, այդ ողբերգական պատկերների ահավոր չափերի առաջ կարկանդակ է...

Հովհ. Շիրազի գեղարվեստական խնդիրը միայն եղեռնապատումը չի եղել: Նա ազգային կոտորածների կողքին ներկայացրել է նաև հայ ժողովրդի դիմադրական տարերքը՝ ի դեմս հայդուկային ազատագրական շարժման հայտնի այն հերոսների, որոնք իրենց կյանքը դրին հայրենյաց զոհասեղանին:

Պատմության արյունոտ հատվածը տեղադրելով իր երևակայական-տեսլաբանական ճանապարհորդության «պարունակներում»՝ Շիրազը չի սահմանափակվում լուր հայկական կոտորածների նկարագրությամբ, այլ քաղաքակիրթ մարդկության համար այդ ամոթալի փաստից աղեղ է կապում դեպի առհասարակ պատերազմների և զենոցիդների դեմ ծառայող հումանիստական գաղափարախոսությունը:

«Ով աշխարհ, այս եղեռնը թո խղճի վրա է ծանրացած: Աչքերդ թեև չոր, բայց հայոց այս մշտախարույկ ցավերի և տառապանքների, հույզերի ու վերքերի վկան եմ, խված հողերի և ջրաղված դիպեղների վկան եմ... Այն օրերում տեսաք, չլացիք, գեթ այժմ, եկեք լալու, գեթ լալու, գեթ ողբալու ինձ հետ, գեթ լալու, գոնե լացով կիսելու այս անկիսելիներս՝ եղեռնացավերն անբժշկելի...»

... Ով ազգեր, թող աչքերս հանվեն՝ թե ձեր մեկն ու մեկի աչքից մի անմեղ թարթիչ պոկվի... Բայց թող երկնառաք անեծքս հրաբխով

ծեր ականջների մեջ՝ թե նորից լռեք...

... Ով գոհար ազգեր, աղամանդ ազգեր, ինչո՞ւ թողեցիք ոսկին փշրվի... ո՞վ մարգարտաձուկեր...»:

Հայոց դարերի վիշտն անթեղած իր վիրավոր սրտում՝ կրակոտ խոսքով դիմում է երկրագնդի բոլոր հզորներին, որոնք լուռ նայում են աշխարհին ու չեն զարմանում, թե ինչպես է կործանվում մի «լուսարար ու անմեղ ազգ», որը ծիածանի յոթ գույներից մեկն է, ազգերի երկմերանգ գորգի մի պայծառ երանգը: «Ես լուռության բերանը աստվածային ժանիքներ եմ ուզում դնել»,- ասում է Շիրազը և խորհրդածուն մարդկային խղճի, չարի ու բարու, մեղքի ու անմեղության հարցերի շուրջ: Քանի որ անչափելի է աշխարհի մեղքը, ուստի ցանկանում է իր վիշտը մղել Մասիսի խորքերը, որպեսզի վերջինս անջեղ հրաբուխ ժայթքի և կործանի «աշխարհն այս անսուգ»:

«Հայոց դանթեականը» Շիրազի աստվածային տաղանդի փայլատակումներից մեկն է, որի առողջ ուժն ու խորությունը զգալու համար անհրաժեշտ է սուզվել նրա աստվածաշունչ տողերի մեջ: Նրա խորին հանդգնամբ՝ այդքան ցավ ու ավեր տեսած ժողովուրդը ի վերջո դուրս է գալու դարավոր մղձավանջից, որովհետև, ինչպես պոեմում է ասված՝ «Մահը մերժող երբեք չի մեռնի»: Պոետը հույսի ջահ է վառում մեր ազգի քարքարոտ ճանապարհին, իսկ այդ ջահը պիտի բռնկվի Սուրբ Մաշտոցի հանճարի ոգուց, ժայռից դուրս եկող Փոքր Մեծի աչքերից ժայթքող իրեղեն բոցից, հայ ֆիդայիների մոլեգնող ցատումից, «ցեղ սպանողին» աշխարհի դատին կանգնեցնելու վստահությունից: Միանգամայն հասկանալի է «Հայոց դանթեականը» տեսլապոեմի շիրազյան ժանրային դասակարգումը՝ «Դատաստանամատյան»:

Շիրազը Հայ Դատի աննահանջ ու հզոր պահանջատերը դարձավ հայ գրականության մեջ: Նրա պոեզիան՝ 30-ական թվականներից սկիզբ առած, ցվերը արտացոլեց իր ապրած ժամանակը. մեծ բանաստեղծը եղավ պատմության ճշմարիտ վավերագիրը:

«Հայոց դանթեականը» գեղարվեստական անկրկնելի կոթող է իր պատմական հայրենիքում յաթաղանի կողմից հոշոտված մեկուկես միլիոն անմեղ հայերի երբեք չխամրող հիշատակին:

Եղեռնը խորապես ցնցեց հայոց ազգային հոգեբանությունը, իր դրոշմը դրեց հոգևոր մշակույթի՝ պատմագրության, գրականության, արվեստի, փիլիսոփայության վրա և ստեղծեց ոճրապատումի, հայրենաբաղձության, կարոտախտի մի հսկայական ժառանգություն, որը բացառիկ արժեք է ներկայացնում համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

Մեր ազգին բաժին հասած այս արհավիրքը՝ արյունարբու թուրք ջարդարանների կողմից կատարված ցեղասպանությունը, երբեք չի ջնջվի սերունդների հիշողությունից, քանի կա հայ ժողովուրդն ու հայոց Մասիս սարը: Հավատավոր յուրաքանչյուր հայի հոգում կա մի սուրբ անկյուն, ուր փայփայում է արդար դատալճճի իրականացման հույսը...

Ռ. ԲԱՐՍՈՒԴԱՐՅԱՆ  
«Ստեփանակերտի հ.2 պեղական մանկապարտեզ» ՊՈՒԿ-ի փոխպնօրեն

# ՆԿԻՐՅԱԼՆԵՐ ԿԵՆՂԱՆԻ ԲԱՅԼՈՂ ԼԵԳԵՆՂ



Մ ի ք ա յ է Լ  
Գ ա բ ը ի է Լ ի  
Գաբրիելյան:  
Ծնվել է  
1945թ. մարտի  
18-ին Ստեփա-  
նակերտ քաղա-  
քում: Ավարտել է  
հ.2 միջնակարգ  
դպրոցը: 1964-  
1966թթ. ծառայել  
է ԽՍՀՄ ՋՌԲ-ում:  
Դեռ դպրոցական  
տարիներին եղել  
է հնուտ հրաձիգ:

Դպրոցների միջև կազմակերպվող մրցումներում միշտ գրավել է 1-ին տեղը: Ծառայության ժամանակ Կիևում արժանացել է 3-րդ պատվավոր տեղին, իսկ Բեռլինում գրավել է 1-ին տեղը: 1967թ. Միքայել Գաբրիելյանին շնորհվել է ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչում:

Երկար տարիներ Ստեփանակերտի դպրոցներում դասավանդել է «Նախնական գիմնոզիական պատրաստություն» առարկան և միաժամանակ «Դինամո» ընկերությունում աշխատել որպես մարզիչ:

Այսօր Հայոց բանակի շարքերում ծառայող շատ գեներալներ և բարձրաստիճան սպաներ ժամանակին եղել են Միքայել Գաբրիելյանի աշակերտները: Երբ սկսվեց Դարաբաղյան շար-

ժումը, Մ. Գաբրիելյանը կանխագզում էր, թե հետագայում ինչ ճակատագիր է սպասվում հայերին: Ու անցավ գործի: Դպրոցի ՆՁՊ դասարանում երկաթյա պահարանի մեջ նա ուներ 7 տարբեր տրամաչափի ուսումնական զենքեր: Դրանք հնուտ վարպետների ծեռքով վերանորոգվեցին և դարձան մարտական: Իր շրջանավարտ տղաներից կազմավորեց զորաջոկատներ, ամեն ջոկատում նշանակեց հրամանատար, և սկսեցին ընդհատակյա պայքարը ագերիների դեմ: Մի ջոկատ էլ ստեղծեց՝ ընդգրկելով կանանց, նրանցից պատրաստելով բուժքույրեր, կապավորներ, դիպուկահարներ:

1993թ. մարտի 4-ին, երբ կազմավորվում էր Շուշիի գունդը, Մ. Գաբրիելյանը իր ստեղծած կանանց ջոկատով ընդգրկվեց գնդում ու նշանակվեց գնդի շտաբի պետ, և հրամանատարի տեղակալ քաղաքական գծով:

Միքայել Գաբրիելյանը աչքի էր ընկնում գեներալի հետ վարվելու հմտությամբ: Լավ գիտեր ռազմական գործը, ինքնավստահ էր, իր օրինակով հավատ ու ներշնչանք էր հաղորդում գնդի տղաներին:

Որդիները՝ Տիգրան և Մխիթար Գաբրիելյանները, հոր հետ ուսի տված կռվել են Շուշիի գնդում, անցել պատերազմի բոհուբոհով, մասնակցել բոլոր մարտերին՝ գերազանց կատարելով իրենց առջև դրված առաջադրանքները:

Միքայելի եղբայրը՝ Գրիգորին, ծառայում էր հոսպիտալում որպես շտապ օգնության վա-



րորդ: Քանի՜ քանի անգամ էր մարտադաշտից վիրավորներ հանել և արագ ու անվտանգ ճանապարհով (եթե, իհարկե, կարելի է համարել ճանապարհ) հասցրել դաշտային հոսպիտալ: Սակայն 1992թ. հունիսի 19-ին Մարտակերտի շրջանի Կիչան գյուղում զոհվում է դարանակալ հակատանկային ականի պայթյունից:

Հորեղբոր զոհվելուց հետո Տիգրան և Մխիթար եղբայրները վրեժով լցված՝ մի ուրիշ վատախոթյամբ էին նետվում մարտի, թշնամուն պատճառում բազմապատիկ զոհեր, իրենք իրենցով հաստատում իրենց ուժը՝ իրենց առյուծաբաշ լինելը: Հանգստի օրերին էլ այցելում էին հորեղբոր գերեզմանին և ասես հաշվետու լինում ոսոխից վրեժխնդիր լինելու իրենց գործողությունների մասին:

Միքայել Գաբրիելյանին հատուկ ծառայությունների համար շնորհվել է փոխգնդապետի կոչում, նա պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:



Զինահազարից հետո նա շարունակել է դպրոցում դասավանդել «Նախնական գիմնական պատրաստություն» առարկան, աշակերտների մեջ սերմանել սեր հայրենիքի նկատմամբ, հայրենիք, որ ազատագրվել է

բազում քաջորդիների արյան զոհով: Կյանքի վերջին տարիներին Միքայել Գաբրիելյանը ղեկավարել է Մարտակերտի շրջանային մարզադպրոցը: Նրա ավագ դուստրը՝ Մարինե, Ստեփանակերտի հ. 3 դպրոցում շարունակում է հոր գործը, մատաղ սերնդին դաստիարակում գաբրիելյանական հայրենասիրությամբ:

Միքայել Գաբրիելյանը իր մահկանացուն կնքեց 2018թ. հունիսի 19-ին՝ ապրողներիս հիշողության մեջ թողնելով մի պայծառ անուն՝ կենդանի քայլով մի լեգենդ...

Գագիկ ԲԵՂԱՐՅԱՆ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

Նվիրում են լավագույն ուսուցիչ, արդարության պայքարի մարտիկ, ճշմարտախոս Յուրի Ավանեսյանին՝ իմ ազնվագույն ավագ գործընկերոջը:

Ընկեր Ավանեսյանի զոքանչը մահացել էր, գերեզմանաքարի վրա նկար էր պետք քանդակել (1975 թվականին էր): Լուսանկարի պատվերը արվել էր Ստեփանակերտի անձնագրային և հատուկ փաստաթղթային լուսանկարների պատրաստման միակ արհեստանոցում:

Ընկեր Ավանեսյանի հետ գնացին լուսանկարը վերցնելու: Պարզվեց, որ գործը կատարվել է, բայց՝ թանկ գնով: Յուրի Պավլովիչը (այդպես էին կոչում նրան մոտիկ մարդիկ) գին առումով իր դժգոհությունը հայտնեց ու անցավ մյուս սենյակ՝ հետազոտելով ցուցադրվող նկարները:

Նկարիչը, օգտվելով բողոքատուի բացակայությունից, ինձ հարցրեց.  
- Ո՞վ է այս մարդը:  
- Ազգային ծառայության պաշտոնյա, - ասացի ես հատուկ տոնով ու ոգևորությամբ:

Նույն պահին մյուս սենյակից մեզ մոտեցավ Յուրի Պավլովիչը: Ես ջանում էի որսալ նրա հայացքը ու առանց որևէ խոսքի փորձում էի դուրս հանել լուսանկարիչի մոտից, որին բոլորը գիտեին որպես կռվարար կնոջ:

Բայց դա ինձ չհաջողվեց, և Յուրի Պավլովիչը հայտարարություն արեց.  
- Երանի թե ուսուցիչ չլինեի... (խոսքը չհասցրեց ավարտել Յուրի Պավլովիչը):

Լուսանկարչուհին սկսեց իր լեզվական թնդանոթային կրակը.  
- Ամեն ինչ լավ են արել, դո՞ւ ով ես, լավ են արել, որ շատ փող են վերցրել, որ վիրավորել են անցյալ անգամ մեր հանդիպման ժամանակ...

Լուսանկարը վերցրինք և հեռացանք չզիտեն պարտավճ, թե՛ հաղթանակած: Այո, որոշների համար ուսուցիչ՝ նշանակում էր թույլ և անպաշտպան էակ, և ուսուցիչի հեղինակությունը չակերտներում էր որոշ մարդկանց համար նույնիսկ այն ժամանակ:

\*\*\*

Յուրի Պավլովիչի հետ գնացինք Ստեփանակերտ առևտրի:  
- Շահեն, չմտնե՞նք այս խանութը գլխարկ առնելու, իմն արդեն հնացել է:

Մտանք հատուկ գլխարկների

վաճառքի խանութ, որն իր տեսականիով, բազմազանությամբ շատ զոհացուցիչ էր, և ընտրելը դժվար էր: Նա ինձ հարցրեց խորհրդի կարգով, թե որն են հավանում: Ասացի՝ դժվարանում են, հարցրու վաճառողուհուն:

- Քույրիկ, - Յուրի Պավլովիչը դիմեց վաճառողուհուն, - խնդրում են մի ուսուցիչ գլխարկ տաք:

(Նա նկատի ուներ, որ համեստ և ուսուցչին սազական է՝ տեսքով, և՛ գնի առումով):

- Հայրիկ, մեզ մոտ գլխարկները մասնագիտական թեքումով չեն:

Նա լավ գլխարկ ընտրեց, գեղջով տվեց Յուրի Պավլովիչին՝ ասելով, որ շատ է հարգում համեստ մարդկանց, որ իր հայրն էլ ուսուցիչ է:

\*\*\*

Նվիրում են 20-րդ դարի լավագույն ուսուցիչ, դպրոցին անմնացորդ նվիրված, անփոխարինելի դեկավարի ու վերջապես բնության պահպանության անխոնջ պաշտպան ընկեր Առաքելյանին:

Ընկեր Առաքելյանն աշխատում էր Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրեն (1952-ից մինչև 1958 թվականը): Բոլորը գիտեին, որ նա կարգապահ և խստապահանջ տնօրեն է, բայց որ այդ աստիճան...

Մի անգամ մանկխորհի նիստ էր, և ճիշտ ժամանակին բոլորը ելել նստել էին ուսուցչանոցում: Ընկեր Առաքելյանը սկսեց նիստը, և չանցած մի քանի րոպե՝ ներս եկավ նրա կինը՝ դպրոցի գրադարանավարուհին: Նա առանց որևէ ավելորդության դիմեց ուշացածին, որ նստի:

Ավարտվեց նիստը, և մինչև ուսուցիչները գրուցում էին ուսուցչանոցում, ընկ. Առաքելյանը պատին փակցրեց մի հրաման, որով նկատողություն էր հայտնել դպրոցի գրադարանավարուհուն երկու րոպե նիստից ուշանալու համար:

Ընկեր Ջախարյանը, հաշվի առնելով իր տարիքը և պատկառանքն ու հարգանքը, բոլորի ներկայությամբ ասաց.

- Ընկեր Առաքելյան, ինչո՞ւ, չէ՞ որ նա Ձեր կինն է:

- Ընկեր Ջախարյան, դպրոցում տնօրենի կին պաշտոն չկա, - պատասխանեց նա:

\*\*\*

Նվիրում են դպրոցի լավագույն

տնօրեններից մեկին՝ խոսքի վարպետ, շատ հոգատար ու խոսքաշեն մի մարդու՝ Միքայել Յուրիանիսյանին (Կարմիր գյուղի ութամյա դպրոցի նախկին տնօրեն):

Կարմիր գյուղի ութամյա դպրոցը ենթարկվում էր տեսչական ֆրոնտալ ստուգման: Ասկերանի շրջժողկրթաժմի քիմիա-կենսաբանություն առարկաների գծով տեսուչ, երջանկահիշատակ Արկարի Գրիգորյանը ստուգում էր ուսումնափորձական հողամասի վիճակը, և ընկեր Յուրիանիսյանը, ոգևորված դպրոցի ուսումնափորձական հողամասի տնկիների վրա իր կատարած պատվաստումներով, պատմում էր, որ այն ծառը հատուկ է իր պատվաստակալով, այն մեկը արդեն պտուղ է տալիս, ուզում էր ասել՝ այն մեկն էլ... շրջված և տեսնում է, որ չորացած է, իրեն չի կորցնում.

- Այս մեկն էլ հանձնարարել են, այսպես են արել...

\*\*\*

Նվիրում են ընկեր Լևոն Ոսկանյանին (մոտիկների համար Լևոն Կարպիչ), մի հոյակապ մարդու, լավագույն ուսուցիչի և հոգատար ընկերոջ:

Նա ծննդով Մոշխմատ գյուղից էր, մշտական բնակություն էր հաստատել Սգնեքում և աշխատում էր դպրոցում որպես դասավար: Առաջին դասարանում աշակերտներին սովորեցնում էր Մեսրոպյան այբուբենի վերջին տառը և դիմեց հետևի նստարանին նստած Սանասարին, որն այնքան էլ ուշադիր չէր դասին:

- Սա ի՞նչ տառ է Սանասար, - հարցրեց՝ ցուցափայտով ցույց տալով տառը:

- Ընկեր, էն ծլպտկեն տառը, - միտքը հաստատեց Սանոն իր լեզվով:

- Լավ, արի՛ գրատախտակի մոտ, Սանո՛ (կարճ անունն էր Սանասարի), հիմա կանդորադառնանք քո մաթեմատիկական գիտելիքներին:

- Գրատախտակին գրիր 22 թիվը, - մեղմ ասաց ընկ. Ոսկանյանը:

- Ընկեր, ըռըջան վե՛ր երկու կիրիմ, - ավելի ոգևորված պատասխանեց Սանոն:

- Նստիր տեղը, - ջղայնացած բացակայեց ընկ. Ոսկանյանը:

Սանոն իսկույն նստեց հատակին: Այժմ Սանոն մեծացել, խելոք և զվարճախոս տղա է դարձել:

### Օգտակար խոսքեր

## ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ ՇԵՆՉ ԿՅԱՆՔԵՆ Է

Աշխարհը պայքարում է կորուստի դեմ, և այդ պայքարի առաջնագծում բռնկվեցին են...

Այսօր խորհում ու հասկանում են, թե ինչու աշխարհում ամենահարգված մասնագիտությունը բժշկի մասնագիտությունն է: Բժիշկ լինելը վեհ ու առաքինի, միևնույն ժամանակ պատվաբեր գործ է, երբ մեկը պայքարում է հազարավոր կյանքեր փրկելու համար: Կյանքը Աստուծուց տրված պարգև է մարդուն, իսկ բժիշկը՝ այդ պարգևի պահապանը: Իրոք, կյանքի իմաստը հենց կյանքն է: Մեկ կյանքի համար բժիշկները այսօր անձնուրաց պայքար են մղում, ինչը ես համարում եմ խիզախություն և հերոսություն:

Այսօրվա բժիշկը կորոնավիրուսի դեմ պայքարում նմանվում է սահմանը պահող զինվորին, որն իր կյանքի գնով փրկում է մեկ ուրիշի կյանք: Դա հերոսություն է, և ժամանակը միայն քայց կտա, որ դա այդպես է, քանցիկ ամենամեծ դատավորը ժամանակն է: Իմաստությունն ասում է, թե մահը բոլորի համար է, բայց բոլորին թվում է, թե դա վերաբերում է բոլորին՝ իրենից բացի:

Այսօր մենք տեսնում ենք, որ կորոնավիրուսի մահացու հարվածի առաջ բոլորը հավասար են՝ անկախ սեռից, ազգությունից, հավատքից, գաղափարից... Ուրեմն, մեր բժիշկները այսօր մարտնչում են այդ հիվանդության դեմ, անձնուրաց պայքարում բոլորիս համար, ինչի համար էլ շնորհակալ ու երախտապարտ ենք նրանց:

Կյանքն ինձ սովորեցրել ու պարտավորեցրել է, որ սիրեն ու հարգեն բժշկի մասնագիտությունը կրող մարդկանց: Եվ ինչպե՞ս չսիրեն, երբ նրանց շնորհիվ, երկու անգամ դուրս գալով մահվան դեմ հանդիման, հաղթող մնացի:

Արդարների ճանապարհը լույսի նման է, նա ինքն է լույս սփռողը արժանիների ճանապարհին: Եվ արդար կլինի, որ մենք շնորհակալ լինենք մարդկային կյանքի փրկության համար մաքառումների ճանապարհ ընտրած բոլոր այն մարդկանց, որոնց բժիշկ են անվա-

նում: Հարգելի՛ խմբագրություն, թույլ տվե՛ք մի ղեղատուն առաջարկել մեր բժիշկ-մասնագետների քննարկմանը: Մի դեղատոմս, որից ես օգտվում եմ տարիներ շարունակ:

Ակնամուծի տառը տոկոսանոց սպիրտային մզվածքը ունի հակազդային վիրուսապան հատկություն: Իմ կարծիքով, այն օգտակար կլինի այլ վիրուսային վարակիչ և չարորակ նորագոյացությունների դեմ: Ավելի քան 45 տարվա մեղվաբույժ եմ և իմ փորձից գիտեմ, որ գրիպի դեմ պայքարում այն միանշա՛նակ օգտավետ է: Կարծում եմ՝ կորոնավիրուսի դեմ պայքարում այն նույնպես կարելի է փորձարկել ու համոզվել:

Վերցնում ենք բժշկական սպիրտ (այն դեղատներում է 0,5 և 22% լուծում), ավելացնում մանր կտրտած 50գ մաքուր ակնամուծ, 15-20 գ մաքուր մեղ (այն շնչառության դեմ պայքարում է ավելի հաճելի և դյուրին ընթացք): Մեկ օր մութ տեղ և սենյակային ջերմաստիճանում պահելուց հետո կարելի է օգտագործել՝ ամեն անգամ օգտագործելուց առաջ շիջը թափահարել (լավ կլինի՝ օրական մի քանի անգամ): Օգտագործման եղանակը շատ պարզ է. բացում ենք շիջի բերանը ու շնչում խորը շունչ քաշելով: Շնչում ենք կես ժամը մեկ ընդհատումներով՝ օրական մոտ 20 րոպե:

Կարծում եմ՝ կորոնավիրուսի դեմ պայքարող անձնակազմի համար այն կլինի օգտավետ, եթե նրանք իրենց մոտ ունենան փոքր շիջի մեջ պահվող լուծույթը և օգտագործեն նշված մեթոդով: Ես այսօր այն օգտագործում եմ՝ նույնիսկ սպիրտի փոխարեն վերցնելով 70%-ոց և ավելի սպիրտ պարունակող թթվան կամ այլ մրգային օղի՝ որպես լուծիչ, այս դեպքում 50գ-ի փոխարեն՝ 40գ ակնամուծ: Այս դեղամիջոցը, հավաստիացնում եմ, ինձ միշտ պաշտպանել է վիրուսային գրիպից:

**Շահեն ՄԱՐԳԱՐՅԱՆ**  
**ԱՅ՝ վասպակավոր ուսուցիչ**  
**Սգնեքի միջն. դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ**

ՔԱՅԼԱՐՇԱԿ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ՍԿՍՎՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱԶՈՒՄՑ

Մենք գտնվում ենք հայ ժողովրդի պատմության ոչ սովորական հանգրվանում: Մեր առջև ծառայած են ազգային դժվարագույն խնդիրներ՝ ժառանգած նախորդ ժամանակներից ու ոչ վաղ անցյալից: Մենք այն սերնդի ներկայացուցիչներն ենք, որ այդ ամենին արժանապատիվ արձագանքելուց բացի հաջողությամբ պիտի շարունակենք մեր նոր պետության, հայոց ազգային բանակի կառուցումն ու հզորացումը: Բոլոր այդ խնդիրները, սակայն, չեն կարող լուծվել առանց երիտասարդության ակտիվ կենսադիրքի, նրա ռազմահայրենասիրական պատշաճ կոփվածքի, առանց ազգային արժեքների համակողմանի եւ խորը իմացության:

Կոփված ու հայրենասեր երիտասարդության դաստիարակության համար մեծ նշանակություն ունեն այն կառույցները, որոնց գործունեության նպատակն է ազգային գաղափարների, ավանդույթների, պատմամշակութային արժեքների, վանքերի, եկեղեցիների ու սրբավայրերի ճանաչելի դարձնելն ու պահպանելը:

Այս սկզբունքները համատեղել հետաքրքիր ժամանցի հետ՝ «Տրտու» արշավական ակումբի գործունեության ներքո. թերեւս այս մտահղացմամբ միավորվեցին երեք տարբեր մասնագիտության տեր երիտասարդներ՝ աս-

րող են մասնակցել կազմակերպվող՝ ոչ միայն պատմաճանաչողական բովանդակությամբ, այլև հաճելի ժամանցով, առողջ ակտիվ կերպի տարրերով հագեցած վերելքներին:

- Առաջին հերթին մեր ուշադրության կենտրոնում են պատմամշակութային արժեք ներկայացնող վայրերը՝ բարձրաբերձ լեռները, վանքերն ու սրբատեղիները ու դրանց վերհանումն ու ճանաչելի դարձնելն ավելի շատ մարդկանց համար: Ակտիվ հանգստի լավագույն միջոց հանդիսացող արշավներն ու լեռնագնացությունները նպաստում են առողջ ակտիվ կերպին: Կարանտինի եւ արտակարգ իրավիճակում սահմանված նորմերից ելնելով՝ ներկայում կազմակերպում ենք արշավներ քիչ թվով մարդկանց հետ եւ աշխատում պահպանել անհրաժեշտ հեռավորություն քայլելու ժամանակ: Մաքուր օդում, հատկապես անտառային արահետներով կազմակերպվող քայլարշավները անհրաժեշտ են մարդկանց հատկապես այս շրջանում: Աշխատում ենք այն ուղղությամբ, որ կարանտինից հետո ավելի շատ մարդկանց, մասնավորապես՝ երիտասարդների ընդգրկենք քայլարշավներին: Ցավոք, մեր արժեքները չենք ճանաչում. կան հրաշալի վայրեր, որոնց մասին ինքներս նոր ենք լսում կամ տեսնում: Ուզում ենք լրացնել այդ բացը, դարձնել ճանաչելի ու հասանելի. չէ՞ որ ճանաչելով են սիրում հայրենիքը: Առաջին հերթին դա պետք է մեզ՝ կազմակերպիչներիս: Ուրախությամբ նշեն, որ ունենք ակտիվ երիտասարդներ, հիմնականում աշակերտներ եւ ուսանողներ, որոնք խանդավառությամբ են մասնակցում մեր ծրագրին: Ամենակտիվը 18-24 տարեկան աղջիկներն են, հետո իրենց հասակակից տղաները, որոնք ոչ պակաս արկածասիրություն ու խանդավառություն են ցուցաբերում: Ակտիվությամբ հաջորդ տեղում են 25-35 տարեկան աղջիկներն ու տղաները: Ի գարմանս մեզ, ակտիվ են նաեւ մեծահասակները: Նախընտրում ենք, որ մասնակիցները լինեն 12 տարեկանից բարձր: Յուրաքանչյուր քայլարշավից առաջ համացանցում ստեղծում ենք առցանց հայտադիմում եւ տարածում event-ի միջոցով: Հայտում կան առողջական վիճակի վերաբերյալ հարցեր: Եթե արշավախմբի անդամներից թեկուզ մեկն ունենում է խնդիրներ, մենք ցուցաբերում ենք անհրաժեշտ օգնություն ցանկացած խնդրի դեպքում, իսկ եթե դժվարանում է քայլելիս, մեր թիմի անդամներից մեկը խմբի վերջում դանդաղ քայլերով ուղեկցում է նրան: Պատասխանատվությամբ ենք մոտենում յուրաքանչյուր խնդրի եւ օպտիմալ լուծում տալիս՝ հնարավորինս պահպանելով անվտանգության կանոնները: Ձրույցներ ենք անցկացնում տեղանքի պատմության, հայրենասիրության, անհանգստացնող թեմաների շուրջ: Կապված տեղանքի հեռավորության եւ առանձնահատկությունների հետ՝ անդամավճարը նվազագույնի է հասցված: Ուսանողների համար գործում են զեղչեր:

Ամհանգստացնող են բնապահպանական



տիճանաբար ընդլայնելով իրենց համախոհների խումբը: «Դասավանդիր, Հայաստան» կրթական ծրագրի շրջանակում Շիրակի մարզից Արցախ տեղափոխված՝ ԵՊՀ-ին առընթեր ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի մաթեմատիկայի ուսուցիչ Արտավազդ Բոյաջյանը արշավներ ու լեռնագնացություններ կազմակերպելու եւ փրկարարական գործում հարուստ փորձ ունեցող, արեւելյան մարտարվեստներում կոփված, առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություններին տիրապետող, ԵՄԱՌ՝ աշխատակից Արսեն Մուսայեյանը եւ քաղաքագետ Նարինե Ներսիսյանն ընթացիկ տարվա սկզբին իրենց սրտի թելադրանքով հանձն առան հիմնադրել «Տրտու» ակումբն ու առաջին արշավը կազմակերպել դեպի Արցախի հնագույն պատմական վայր Կաչաղակաբերդ: Հաջող մեկնարկից հետո կազմակերպվեց քայլարշավ դեպի Կոչիկ անապատ վանական համալիր, իսկ մարտի 8-ին՝ դեպի Դիզափայտի բարձունքին տեղակայված Կատարո վանք:

Ակումբի հիմնադիր-անդամ Արտավազդ Բոյաջյանը մեզ հետ զրույցում պարզաբանեց, թե ինչ սկզբունքների են մասնավորապես հետեւում քայլարշավներ եւ լեռնագնացություններ կազմակերպելիս, եւ ովքեր կա-

խնդիրները: Ակումբի անվանումը պատահական չէ: Տրտու-Թարթառի վրա կառուցվող հէկ-երը ավերիչ հետեւանքներ կունենան՝ կանգնեցնելով մեզ աղետի առջև, ինչի մասին լռելը նույնպես աղետաբեր է: Չենք կարող շրջանցել բնության գրկում եւ սրբավայրերում կենցաղային աղբի կույտերի կամ եկեղեցու պատերին գրառումներ անելու, քարե-



րը վնասելու, փորագրելու վատ սովորույթի թեման, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ վանդալիզմ եւ ոտնձգություն ազգային արժեքների հանդեպ: Փորձում ենք մեր պահվածքով բնությունն անաղարտ պահելու օրինակ ցույց տալ մասնակիցներին, իրենք էլ՝ իրենց հերթին իրենց շրջապատին: Հաճախ է պատահում, որ թեթեւ ուսապարկերով՝ միայն սնունդով, գնում ենք նախանշված վայր, բայց վերադառնում աղբով լիքը ուսապարկերով: Ոչ միայն մենք չենք ուզում աղտոտել բնությունը, այլև մինչև մեզ կուտակված աղբն էլ հավաքում, մեզ հետ բերում ենք ու թափում համապատասխան տեղում,- ասում նա:

Մինչ Արտավազդ Բոյաջյանը կարեւորում էր հայրենաճանաչությունը, առողջ մոտեցումն ակտիվ կերպի ու բնապահպանության հանդեպ, ակումբի մյուս հիմնադիր-անդամ Արսեն Մուսայեյանը վերոնշյալին զուգահեռ վեր հանեց զբոսաշրջության զարգացման, մասնավորապես, սպորտային տուրիզմի զարգացման անհրաժեշտության թեման: Արսեն Մուսայեյանի խոսքով՝ Արցախում շատ թաքնված վայրեր կան, որոնց մասին իրենք էլ տեղյակ չէին: Նպատակ ունեն արշավների միջոցով բացահայտել Արցախի թաքնված վայրերը: Իսկ մեր հարցին, թե արդյո՞ք կա-

րեւոր է սպորտով պարապած լինելը դժվար բարձրանալի տեղերում դիմացկունություն ցուցաբերելու համար, կարատեում մարզված արշավախմբի ղեկավարը պատասխանեց. «Արշավներում կարեւորը նպատակասլացությունն է, կամքի ուժը, գիտելիքը: Ֆիզիկական ուժն էլ է կարեւոր: Ուժային սպորտն այնքան լավ չի օգնում դժվարանցանելի տեղերը հաղթահարելիս, որքան սպորտային տուրիզմը, պարանով անցումները եւ նմանատիպ գործողություններ կատարելը»:

Իսկ մեր հաջորդ զրուցակից, ԵՄԱՌ՝ ուսուցիչ Սմբատ Ավետյանը, որը մասնակցել էր ակումբի կազմակերպած՝ Դիզափայտի բարձունքի հաղթահարմանը, բարեհաջող քայլարշավի համար առաջնահերթ պայման է համարում մասնակիցների ֆիզիկական առողջությունը, հոգեպես եւ մտավոր ուժեղ լինելը, որը թույլ չի տալիս խուճապի մատնվել դժվարության դեպքում: Իսկ եթե այդպիսին չես,

հոգ չէ, միշտ էլ խմբում կան կոփված մարդիկ, որոնք անպայման կօգնեն անհրաժեշտության դեպքում: Սմբատ Ավետյանի համար հետաքրքիր են թիմային արշավները ոչ միայն տեղանքի առումով, այլև նոր ծանոթությունների, իրար օգնելու, այդ ձեւաչափում շփվելու տեսանկյունից: Ուշագրավ է նրանց պատմությունը՝ կապված Դիզափայտի ճանապարհին ուրիշ խմբի հանդիպելու հետ, որն օգնության կարիք ուներ: Վերջիններս ընտրել էին հյուսիսային կողմով տանող ճանապարհը, որն, իհարկե, զուգահեռության տեսակետից ավելի դիտարժան է, քան մեր զրուցակիցների ընտրած հարավային կողմով տանող ճանապարհը, սակայն մարտ ամսին ու բարձունքին յուրահատուկ ծյունածակությամբ էր պատած, որը վտանգ էր պարունակում: Նկատելով հեռվում ծյան մեջ խրված փոքր խմբին՝ ակումբի տղաները, որոնք օժտված են մարդասիրական սկզբունքներով ու փրկարարական հմտություններով, օգնության հասան եւ դուրս հանեցին այդ խմ-



բի անդամներին՝ օգնելով բարձրանալ մինչեւ վերջ եւ նաև ուղեկցելով իջնելու ժամանակ: Հետեւելով մասնակիցների արձագանքներին՝ դժվար չէ եզրակացնել, որ դրական տպավորություններով են միմյանց հրաժեշտ տալիս ու անհամբեր սպասում «Տրտու» ակումբի կազմակերպիչների նոր «invite»-ներին սոցցանցի միջոցով: Իսկ շփվելով կազմակերպիչների հետ՝ հասկանում ենք, որ անվտանգ ու հետաքրքիր արշավները հայրենասիրական ոգով, ապահովված են: Առաջկայուն ծրագրում են բացօթյա ճամբար գիշերակացով, իհարկե, կարանտինից հետո:

# ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՄԿՎԻ ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐԵՐԻՑ



Սկիզբը՝ «Լուսարար»-ի հ. 7-9-ում

## 1 սեպտեմբերի, չորեքշաբթի, Ստեփանակերտ

Ամառային արձակուրդն, ավարտ, շուտ անցավ, բայց պետք է ցավել դրա համար: Եվ հիմա սեպտեմբերի 1-ն է:

Կանգնել եմ դասընկերներիս հետ և կարոտով եմ նայում դպրոցին, ինչպես պանդուխտը հայրենիքից հեռանալիս կարոտով է նայում հայրենի հողին, տանը, ծառին և նույնիսկ՝ քարին:

Գիտեմ, որ այս տարի ևս, ինչպես անցյալ տարի, կարճ է լինելու հարազատ դպրոցիս մեջ մնալու հաճույքը, նախկին դասընկերներիս հետ դասի նստելը և վեր կենալը հարազատ զանգի կանչի տակ:

Կարճ է լինելու հարազատ ուսուցչուհու կամ ուսուցչի ջերմ ներկայությունը դասարանի մեջ: Կարճ կլինեն նաև նրանց բացատրումները և համոզիչ պատասխանները տրված հարցերին:

Սակայն, թեև հեռու հայրենի հողից, այնտեղ՝ Կիպրոսում էլ ունեն հավատարիմ և նվիրված ընկերներ: Նրանք, արցախցի ընկերներիս հետ համեմատած, նույնն են թե՛ ազգությամբ, թե՛ հոգով: Տարբերությունն այն է, որ այստեղի ընկերներիս ճանաչում եմ մանկությունից: Միասին ենք մեծացել, միասին կրել պատերազմի դառնությունները: Եվ ամենակարևորը՝ կապված ենք հայրենի հողին ու ամբողջ երկրամբ ենք զգում նրա ջերմությունն ու անհամեմատելի ուժը:

Կիպրոսում սովորող իմ ընկերների ճակատագիրը ստիպել է թողնել հայրենի հողը և սփռվել աշխարհով մեկ, դառնալ պանդուխտ: Նրանք մեծ փափագ ունեն կրթվել հայրենի ու հայ դաստիարակվել:

Այնտեղի և այստեղի ուսուցիչներիս մոտ նույնպես կա տարբերություն. Մելքոնյան կրթական հաստատությունում մեծամասնությամբ տարաշխարհիկ են, բայց նույնն է նրանց նպատակը՝ կրթել և դաստիարակել այնպիսի երեխաներ, որ հետագայում դառնան հայրենիքի արժանի զավակներ, բարձր պահեն ազգի պատիվը:

Կիպրոսում ու Արցախը համարյա նույն ճակատագիրն ունեն. երկուսի համար էլ գոյություն ունի լիարժեք ազատ ու անկախ լինելու խնդիրը: Այդ է պատճառը, որ ես հարազատորեն եմ վերաբերվում Կիպրոս փոքր երկրին:

Մի քանի օր հետո կմեկնեմ երկրորդ հայրենիք դարձած Կիպրոսում ուսանելու: Թույլ տվեք ձեր բոլորի սերը տանել ինձ հետ իբրև գորավիզ Կիպրոսի մեր եղբայրների ազգափրկիչ պայքարի:

Իսկ իմ սերը թողնում եմ ձեզ:

II ՏԱՐԻ  
1999-2000  
III «ա» դասարան

## ԿՐԿԻՆ՝ ՄԿՎ-ՈՒՄ 7 սեպտեմբերի, երեքշաբթի

Բարեհաջող վայրէջքից, օդանավակայանում վիզանտերը ստանալուց և ճամպուկները առանց դժվարության գտնելուց հետո մենք ՄԿՎ հասանք առանց որևէ արկածի:

Դպրոցի մուտքը՝ գլխավոր դարպասը, բաց էր, ինչպես միշտ: Այնուհետև մեզ դիմավորեցին պահակների պես կանգնած Մելքոնյան եղբայրների արձանները: Իսկ նրանց շուրջը ժպտում էին խայտաբղետ ծաղիկները:

Պատվելով դպրոցի շուրջը՝ մեր ավտոբուսը կանգ առավ իր մշտական «կայարանում»՝ դպրոցի առաջ:

Նույն Մելքոնյանն էր ամեն տեսակետից: Նույն աշակերտությունն էր՝ առանց նորեկների (նորեկները հետո եկան):

Ինչպես նախորդ տարի, մեզ տվեցին մեր սենյակի բանալիները՝ այս անգամ 17 համարին:

Շուտով ճաշարանում էինք: Կիսադատարկ ճաշարանը սպասում էր սաներին:

Այնտեղ էլ պատահեցի իմ նախորդ տարվա ընկերոջը՝ պարսկաստանցի Մայքլին: Ողջագուրվեցինք, կարծես երեք տարի տեսած չլինեինք:

Երկար չստեց մեր ճաշը: Շտապեցինք սենյակ՝ իրենցները դասավորելու:

Մի կերպ մթնեցրինք օրը: Պառնեցինք 10-11-ի մոտերը՝ լուսացնելու գիշերը:

## 8 սեպտեմբերի, չորեքշաբթի

Այս օրը շատ հետաքրքիր օր էր՝ մի սովորական օր: Եվ քանի որ ես նորեկ մելքոնյանցի չէի, ինձ համար առավել ևս սովորական էր: Այնպես որ, երկար չեմ շարունակում, այլ ասում եմ՝ այս օրը հետաքրքիր բան չպատահեց:

## 9 սեպտեմբերի, հինգշաբթի

Այդ օրը առավոտյան մենք իմացանք, որ դասերը պիտի սկսվեն սեպտեմբերի 13-ին: Մինչ այդ չէինք հետաքրքրվել:

Իմանալով, որ դասերը սկսվելու էին 13-ին, զարթացանք. ես մինչև հիմա էլ չեմ հասկանում, թե ինչու էին մեզ այսքան շուտ բերել տվել այստեղ: Իհարկե, կային աշակերտներ, որ պիտի քննություն տային, ավելի ճիշտ՝ վերաքննություն: Դրանք այն աշակերտներն էին, որոնք տարեվերջի քննություններում մի քանի առարկաներից չէին անցել: Եվ պետք էր վերաքննվելու տային այն առարկաները, որոնք չէին անցել:

Այս օրվա կարևորությունն էլ կայանում էր սրանում: Հետագա օրերին՝ մինչև դպրոցի սկսվելը, այլևս հետաքրքիր բան չկար:

## ԴՊՐՈՑՈՒՄ

## 13 սեպտեմբերի, երկուշաբթի

Առաջին անգամ (այս տարում) լսեցի բոլորին զարթնեցնող առավոտյան բարձր ու երկարատև զանգը: Հետագա գործողությունները չեմ նկարագրում, քանի որ արդեն բոլորին ծանոթ է, թե արթնանալուց հետո ինչ ենք անում:

Դպրոցի առաջին օրն էր: Եվ մի փոքր միջոցառում կար դրա առթիվ:

Ըստ դասարանների կանգնեցինք Մելքոնյանների (եղբայրների) արձանների առաջ: Քահանան՝ սաներից մեկի հայրը, իր սուրբ խոսքն ասաց, և երգչախումբը երկու երգ (ավելի ճիշտ՝ աղոթք) երգեց, և մենք կանոնավոր ձևով շարժվեցինք դեպի հանդիսարան: Այնտեղ դպրոցի մի քանի դասավանդողներ իրենց խոսքն ասացին և վերջում՝ տնօրենը: Այնուհետև իմանալով իրենց դասարանները (նորեկները)՝ մենք իջանք դասարանները:

Ջրոսանք էր: Միքայելը տեղեկացրեց, որ հայաստանցի մի տղայի քեռին եկել է և մեր նամակներն է ուզում (նախօրոք պայմանավորվել էինք նամակ գրել և այդ մարդու հետ ուղարկել): Նամակները սենյակում էին, դպրոցի դռները՝ փակ: Ստիպված էինք օրվա հերթապահին գտնել, որ դուռը բացեր:

Երկար փնտրելուց հետո գտանք: Նամակները պատրաստ էին: Հիմա էլ նամակատարը չկար: Ձանգը տվեց, սակայն նա դեռ չկար ու չկար:

Գնացի աշխարհագրության դասի՝ մեծերի շենքը: Երբ դասը վերջացավ, եկա և տեսա, որ Առնոլդը և Միքայելը իրենց նամակները տվել են, քանի որ դասի ժամանակ այդ մարդը եկել էր փոքրերի դպրոցը՝ նամակները տանելու: Իսկ այդ ժամանակ ես այնտեղ չէի: Այ քեզ վատ պատահականություն...

## 14 սեպտեմբերի, երեքշաբթի

Դպրոցի երկրորդ օրն էր: Առաջին օրը այդպես կարևոր դաս չարեցինք: Միայն խոսեցինք ամառային արձակուրդների մասին: Սակայն երկրորդ օրը պետք է գրքեր ունենայինք: Այնպես որ, այդ օրվա կարևոր դեպքերից մեկը գրքեր ստանալն էր:

## 15 սեպտեմբերի, չորեքշաբթի

Այդ օրը ճաշարանում ճաշի ժամանակ պարտավոր էինք ուտել նոր և շատ անողորմական ճաշ: Չկերանք, այլ որոշեցինք գնալ ակունք և sandwich գնել: Այդպես էլ արեցինք:

## 16-20 սեպտեմբերի

Միօրինակ և անհետաքրքիր ու երկարածիզ օրեր էին:

## 21 սեպտեմբերի, երեքշաբթի ՀՀ անկախության օր

Ինչպես հասկացաք, այս օրը Հայաստանի անկախության օրն է: Եվ հասկանալի է, որ ազատ օր է:

Գնացինք ակունք հեռուստացույց դիտելու: Հայաստանի հեռուստաալիքը (ի միջի այլոց, արբանյակային ալեհավաքի միջոցով մենք կարող ենք նայել տասնյակ հեռուստաալիքներ, այդ թվում և՛ Հայաստանի):

Նայեցինք «Հայլուր»-ը և Հայաստանից թարմ լուրերով վերադարձանք ՄԿՎ (թեև ակունքը պատկանում է ՀԲՄԸ-ին, այնուամենայնիվ, կոչվում է դպրոցի սահմանից դուրս):

## 22-23 սեպտեմբերի

Անհետաքրքիր դպրոցական օրեր...

## 24 սեպտեմբերի, ուրբաթ

Դպրոցական այս տարվա ընթացքում առաջին անգամ դուրս եկանք քաղաք: Նույն քաղաքն էր, մեքենաների նույն ծանծաղուցի ծայրն էր, երկար, բայց հետաքրքիր ճանապարհը: Եղանք մեր սիրած հանրախանութում՝

«Woolworth»: Չէինք կարող դատարկ ձեռքով վերադառնալ: Այնպես որ, մանր գնումներով վերադարձանք ՄԿՎ:

## 30 սեպտեմբերի, հինգշաբթի

Հինգշաբթին ընդհանրապես դպրոցական նախավերջին օրն է: Բայց այդ օրը վերջինն էր, քանի որ հաջորդ օրը Հոկտեմբերի 1-ն է՝ Կիպրոսի անկախության օրը:

## 1 հոկտեմբերի, ուրբաթ

Ի տարբերություն անցյալ տարվա, այս տարի Կիպրոսի անկախության օրվա առթիվ չզգնացինք «գազրոդ»: Այլ մի սովորական ազատ օր էր:

Երեկոյան հնարավորություն ունեինք ուշ քնելու: Սակայն շատ էինք չափազանցել:

Ուշ երեկոյան հավաքվել էինք հայաստանցիներից մեկի սենյակում՝ 2-րդ սենյակում և թղթախաղ էինք խաղում: Կարծում էինք՝ դեռ քնելու ժամանակը չէ:

Երբ խաղը վերջացրինք ու վերադարձանք սենյակ, հերթապահը հարցրեց, թե որտեղ էինք: Ասացինք, որ հայաստանցիներից մեկի սենյակում գործ կար: Նա մեզ, ինչպես նաև մի քանի հայաստանցիների, պատժեց: Պետք էր «քանթիմի» գետիկները մաքրեինք: Չմաքրեցինք, այլ մի քիչ խոսեց և՛ վերջ:

Այդպես լուսացրինք ուրբաթ օրվա գիշերը:

## 6 հոկտեմբերի, չորեքշաբթի

Այդ օրը Մելքոնյանի առօրյայից տարբերվում էր: Սովորական օր չէր՝ լրանում էր Առնոլդի 15-ամյակը: Լավ պատրաստություն էր տեսել՝ հրավիրելով բոլոր հայաստանցիներին:

Մենք էլ անկյուն չէինք քաշվել: Համատեղ ուժերով ես և Միքայելը որոշեցինք Հոմանիշների բառարան գնել, որ Առնոլդը շատ էր սիրում և պիտի գներ, եթե չնվիրեինք:

Երեկոյան ընթրիքին մոտ երկու քառորդ ժամ հետո երկրորդ սերտողության պահին մշեցինք Առնոլդի 15-րդ տարեդարձը:

Մոռացա ասել, որ ծնողներս առաջին անգամ զանգեցին այս դպրոցական տարվա ընթացքում:

## 7 հոկտեմբերի, հինգշաբթի

Առաջին հինգ դասերը վերջացել էին, և զբոսանք էր, իրենց լեզվով նշանակում է ընդմիջում: Հայաստանցիները հավաքվել էին մի տեղ: Մոտեցա և տեսա մի տարօրինակ մարդ՝ երկար մազերով, բաճկոնով և սպիտակ-դեղնագույն տաբատով՝ ներքևի մասում լայնանալով: Իսկ հագին կային տափակ սև կոշիկներ: Առաջին հայացքից երևում էր՝ կամ նկարիչ է, կամ էլ դերասան: Հարցուփորձից հասկացանք, որ դերասան է, ազգությամբ՝ հայ, ապրած և եկած Ֆրանսիայից: Ես իսկույն հիշեցի ֆրանսիացի դերասաններին նույն արտաքինով:

Նույն օրը ևս մի քանի անգամ տեսանք նշածս մարդուն:

## 8 հոկտեմբերի, ուրբաթ

Հայոց լեզվի պահին դուրս եկանք մոտակա անտառը՝ կարդալու մեր ընտրած գրքերը (մինչ այդ պարտադիր կերպով պետք է գրքեր ընտրեինք: Ես ընտրել էի «Դավիթ Բեկ»-ը): Շատ հաճելի էր գիրք կարդալ բնության գրկում: Այդ օրը նաև դուրս եկանք քաղաք:

(շարունակելի)

**ԿՐՈՒՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆ

ԽՍՀՄԳԻՐ՝  
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝  
«Լուսարար»  
ՓԲԸ

Մտեփանակերտ,  
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,  
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Մտեփանակերտի «Դիզակ պլյուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 29.04.2020թ.: